կը նաւէ դէպի Եգիպտոս։ Ռոդոսի առջեւ կը պատահի Խալիլ Փաշայի նաւատորմիղին (210—211)։ Ճանապարհին յարձակում կը կրեն նաւորդները ծովահէններէ. բայց Սիմէոն իւր խումբին հետ կը հասնի բարեաւ Ալեքսանդրիա, ուսկից կը շարունակէ ճանապարհը մինչեւ Մսրը (Գահիրէ)։ Հոս կը պատահի Թոխաթեցի Մաղաքիա աբեղային. երկու ամիս կը մնայ անոր քով հիւր (217)։ Մաղաքիայի միջնորդութեամբ կը ծանօթանայ նաեւ հայազգի խոճայ Իբրահիմ չաւի[7] հետ, որ զինքը ստէպ ստէպ կը հիւրամեծարէ (221)։

Գահիրէէն կ'անցնի Գազայի ճանապարհով Երուսաղէմ։ Գրիգոր Պարոնտէր կը հիւրասիրէ զինքը Ս. Յակոբեանց վանքը, եւ կը յանձնարարէ գրել այլ եւ այլ շրջաբերական թղթեր (էջ 252)։ «Կացի անդ, կը գրէ Սիմէոն, ի Վարագայ Խաչէն մինչեւ ի Զա-

---

[7] Բերլինի Թ. 57 ձեռագիր Մաշտոցի մէջ կը կարդամ յիշատակագրութիւնս. «Ես սարկաւագ Լեհացիս թվին ՌԿ. երկուսիս հանդիպեցա Մսիր քաղաքիս։ Ով ընթերցողք այսմ տառիս ... չնորհակալ եմ տէր Դաւիթ ընկերիս. ես Մկրտիչ Տիւրիկեցի միայն անուամբ երէց կոչի, զայս Սարգսիս բռնեցի, զմեռեալ գրեանքս ի հետ նորոգեցի...։ Ի ժամանակս Խոճայ Իպրահիմչային եւ Ֆարմանին. նոցա ձեռնտուութեամբն եւ կամակցութեամբն կազմեցաք զայս Մաշտոցս...»։ Հ. Յ. Տաշեան՝ Ցուցակ հայերէն Ձեռագրաց Բերլինի արքայական Մատենադարանին, Թ. 57 (անտիպ)։ Հմմտ. եւ Հ. Ղ. Ալիշան՝ Կամենից, էջ 171։ Սարգիս սարկաւագ Լեհացին նոյն է հաւանօրէն Սարգիս զպրին հետ, որ 1616ին ի Լվով օրինակել կու տայ Վարդանայ Արարածոց Մեկնութիւնը (Կամենից, 171)։